



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 69- Ն

30 Հունիսի 2022

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2-ՐԴ, 5-ՐԴ, 7-ՐԴ
Ա 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ «ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳՐԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի
1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ


1. Հաստատել՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում
«Ֆիզկուլտուրա» առարկայի 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների ծրագրերը՝
համաձայն հավելվածի:

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM, 1909620211



Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2022 թվականի նոյեմբերի 30-ի N 69 Ն հրամանի

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
«ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ» ԱՌԱՐԿԱՅԻ 2-ՐԴ, 5-ՐԴ, 7-ՐԴ և 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ԾՐԱԳՐԵՐ**

Ֆիզկուլտուրա
2-րդ դասարան

Թեմա 1	
Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին գիտելիքներ – 5 ժամ	
Նպատակը	
<ol style="list-style-type: none">Պատկերացում տալ առավոտյան մարմնամարզության և ֆիզիկական վարժությունների առողջարարական նշանակության մասին:Գիտելիքներ հաղորդել ֆիզիկական վարժությունների կատարման ժամանակ հիգիենիկ կանոնների վերաբերյալ:Գիտելիքներ հաղորդել կոփման միջոցների և կանոնների վերաբերյալ:Պատկերացում տալ հին օլիմպիական խաղերի մասին:	
Վերջնարդյունքները	
<ol style="list-style-type: none">Կարևորի ինքնուրույն առավոտյան հիգիենիկ մարմնամարզություն կատարելը:Գիտակցի կոփման կանոնների և անձնական հիգիենայի պահպանման կարևորությունը:Իմանա սովորած ֆիզիկական վարժությունների, որոշ շարժախաղերի անվանումները:Պատկերացում ունենա օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների մասին:	
Բովանդակություն	
<ol style="list-style-type: none">Առավոտյան մարմնամարզության և ֆիզիկական վարժությունների նշանակությունը առողջության համար:	

2. Հիգիենիկ կանոնները ֆիզիկական վարժություններ կատարելիս:
3. Օլիմպիական խաղերի ծագման համառոտ պատմությունը:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<ol style="list-style-type: none"> 1. Ծնողների օգնությամբ օգտվելով համացանցից և գրականությունից՝ ուսումնասիրում և ներկայացնում են առավոտյան մարմնամարզության և ֆիզիկական վարժություններ կատարելիս հիգիենիկ կանոնների պահպանման նշանակությունը առողջության համար: 2. Դասարանում ինտերակտիվ խաղերի միջոցով կազմում են օլիմպիական խաղերի ծագման համառոտ պատմության իրենց տարբերակը: 	<ol style="list-style-type: none"> 1. Ժամանակ և տարածություն Սովորողներն ուսումնասիրում են մարզական ոլորտի տարբեր մարդկանց պատմությունները, ինչպես նաև ֆիզիկական վարժություններով մարզումների դերը տարբեր ժամանակների նշանավոր մարդկանց կյանքում: 2. Անհատական և մշակութային արժեհամակարգ Սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի

	<p>դրսևորումներ: Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:</p> <p>3. Չարգացում Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):</p>
Միջառարկայական կապեր	
<p>Հայոց լեզու - բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:</p> <p>ՏՀՏ - համակարգչից և համացանցից օգտվելու, նյութի համակարգչային ներկայացման ձևերի իմացություն:</p> <p>Պատմություն – պատմական տվյալների իմացություն:</p>	
Կապը հանրակրթության չափորոշչի վերջնարդյունքների հետ	

S1, S2, S3, S15, S22, S23, S24, S25, S26, S27, S28, S29, S30, S33, S35, S36, S37, S38

Թեմա 2	
Աթլետիկական վարժություններ – 12 ժամ. քայլքեր, վազքեր, ցատկեր, նետումներ	
Նպատակը	
<ol style="list-style-type: none"> 1. Սովորեցնել վազքի, ցատկերի և նետումների տեխնիկապես ճիշտ կատարումը: 2. Նպաստել վազքի, ցատկերի, նետումների հմտությունների ամրապնդմանը: 3. Նպաստել տարածության մեջ կողմնորոշման և կոորդինացիոն ունակությունների ձևավորմանը: 4. Նպաստել արագության, արագաուժային, ճարպկության, դիմացկունության ունակությունների ձևավորմանը: 5. Դաստիարակել կամային որակներ: 	
Վերջնարդյունքները	
<ol style="list-style-type: none"> 1. Կարողանա վազել 30 մ և դանդաղ վազել 6 րոպե: 2. Կարողանա թափավազքով հեռացատկել և բարձրացատկել: 3. Կարողանա թենիսի գնդակը նետել նշանակետին: 4. Դրսևորի արագության, արագաուժային, ճարպկության, դիմացկունության ունակություններ: 5. Ունենա կամային որակներ: 	
Բովանդակություն	
<p>Քայլք` ճիշտ կեցվածքով:</p> <p>Վազքեր` վազք բարձր մեկնարկից, վազք` շարժման ուղղության փոփոխումով, վազքաքայլերի երկարությունը և հաճախությունը փոփոխելով: Հավասարաչափ վազք մինչ 5 րոպե: Մաքրքավազք 3 x 10 մ:</p> <p>Ցատկեր` հեռացատկ տեղից: Բարձրացատկ 2–4 վազքաքայլով 30–40 սմ բարձրության պարանի վրայով:</p> <p>Նետումներ` թենիսի գնդակի հեռու նետում: Թենիսի գնդակի նետում նշանակետին տեղից:</p>	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
Առանց գործիքների և դրանց կիրառմամբ աթլետիկական վարժությունների կատարում:	<ol style="list-style-type: none"> 1. Օրինաչափություն Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում,

	<p>օրինակ՝ քայքի, վագրի կառուցվածքում, շարժումների հերթագայության մեջ: Համապատասխան մոդելներն առաջին քայլն են՝ պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք:</p> <p>2. Համակարգ և մոդել</p> <p>Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Աթլետիկա» մարզածևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջությունն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից և խաղերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <p>3. Անհատներ և հարաբերություններ</p> <p>Սովորողներն ուսումնասիրում են մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական,</p>
--	---

	<p>մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
Միջառարկայական կապեր	
<p>Հայոց լեզու- բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:</p> <p>Երաժշտություն:</p> <p>Մաթեմատիկա- թվագիտություն, հաշվողական կարողություններ:</p> <p>Կենսաբանություն - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:</p>	
Կապը հանրակրթության չափորոշիչի վերջնարդյունքների հետ	
S1, S2, S3, S15, S22, S23, S24, S25, S26, S27, S28, S29, S30, S33, S35, S36, S37, S38	

Թեմա 3
<p>Մարմնամարզական վարժություններ - 10 ժամ. շարային վարժություններ, ընդհանուր զարգացնող վարժություններ, ակրոբատիկական վարժություններ, մագլցման և պարային վարժություններ, ռիթմիկ մարմնամարզության վարժություններ</p>
Նպատակը
<ol style="list-style-type: none"> 1. Սովորեցնել շարային հրահանգների, շարափոխումների, մագլցելու, գլուխկոնծիի կատարումը, հավասարակշռության պահպանումը: 2. Նպաստել ճիշտ կեցվածքի, առողջության ամրապնդման, շարժումների ռիթմի և գեղագիտական ճաշակի ձևավորմանը: 3. Ձևավորել շարժումները համաձայնեցնելու, կողմնորոշվելու և կոորդինացիոն կարողությունները:

<p>4. Չարգացնել ճկունությունը, արագաշարժությունը, ճարպկությունը, դիմացկունությունը, ուժը:</p> <p>5. Դաստիարակել կարգապահություն, համարձակություն և վստահություն սեփական ուժերի նկատմամբ:</p>	
<p>Վերջնարդյունքները</p>	
<p>1. Կարողանա մագլցել մարզանստարանի և մարզապատի վրայով:</p> <p>2. Կարողանա քայլել մարզանստարանի վրայով, ոտնաթաթի վրա, կատարել կից քայլեր, դարձումներ, կքանիստներ:</p> <p>3. Կարողանա կատարել առաջգլուխկոնծի, թիկնականգ և ընդունել «կամուրջ» դրությունը:</p> <p>4. Կարողանա քայլել և վազել երաժշտության ռիթմին համապատասխան, կատարել կողադիր, փոփոխական, քառատրոփ քայլեր, ոստյուններ:</p>	
<p>Բովանդակություն</p>	
<p>Շարային վարժություններ` շարափոխում միատողանից երկտողանի, միասյուն շարքից երկսյուն շարքի, «Շարվիր», «Չգաստ», կից քայլերով բացազատվել ու խտանալ:</p> <p>Ընդհանուր զարգացնող վարժություններ` առանց առարկաների, մարզափայտերով, գնդակներով, օղերով, ցատկապարաններով: Կեցվածքի ձևավորման վարժություններ: Շնչառական վարժություններ: Հարթաթաթության կանխարգելման վարժություններ:</p> <p>Մագլցման վարժություններ` մագլցում թեք տեղադրված մարզանստարանի վրայով, մագլցում մարզապատի վրայով` վեր և վար:</p> <p>Հավասարակշռության պահպանում` կանգ ոտնաթաթերի, մեկ ոտքի վրա հատակին և մարզանստարանի վրա, քայլք մարզանստարանի վրա:</p> <p>Ակրորատիկական վարժություններ` կքանիստ դրությունից` գլորում առաջ, առաջգլուխկոնծի, մեջքին պառկած դրությունից կանգ թիակների վրա, այդ դրությունից գլորվել առաջ` ընդունելով հենակքանիստ դրությունը:</p> <p>Ռիթմիկ մարմնամարզության վարժություններ` երաժշտության բնույթին համապատասխան քայլքեր, վազքեր, ցատկեր: Գլխի թեքումներ, դարձումներ: Իրանի թեքումներ, դարձումներ: Ձեռքերի խաչաձև բարձրացում և իջեցում: Ոտնաթաթի ցուցադրում` առաջ և կողմ, կանգնել ոտնաթաթերին: Ձեռքերի շարժումներն ուղեկցել գլխով և հայացքով:</p> <p>Պարային վարժություններ` կից քայլք մի ոտքի կրունկը դնելով մյուսի թաթի մոտ, կից քայլք կքանստելով, կողադիր, փոփոխական, քայլք և ոստյուններ երաժշտության նվագակցությամբ:</p>	
<p>Առաջարկվող գործունեության ձևեր</p>	<p>Խաչվող հասկացություններ</p>
<p>1. Առանց գործիքների և դրանց կիրառմամբ մարմնամարզական վարժությունների կատարում:</p>	<p>1. Օրինաչափություն Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող</p>

	<p>պատահարներում և հարաբերություններում, օրինակ՝ շարային կամ ակրոբատիկ վարժությունների կառուցվածքում, շարժումների հերթագայության մեջ: Համապատասխան մոդելներն առաջին քայլն են՝ պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք:</p> <p>2. Համակարգ և մոդել</p> <p>Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Մարմնամարզություն» սպորտաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից և խաղերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <p>3. Անհատներ և հարաբերություններ</p> <p>Սովորողներն ուսումնասիրում են մարզական գործունեության մեջ դրսևորվող</p>
--	---

	<p>համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
Միջառարկայական կապեր	
<p>Հայոց լեզու- բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում: Երաժշտություն: Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ: Կենսաբանություն - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:</p>	
Կապը հանրակրթության չափորոշչի վերջնարդյունքների հետ	
S1, S2, S3, S15, S22, S23, S24, S25, S26, S27, S28, S29, S30, S33, S35, S36, S37, S38	

Թեմա 4
Շարժախաղեր – 32 ժամ. ֆիզիկական ընդունակությունների մշակմանը նպաստող և «Չվարճալի ֆուտբոլ» տարրերով խաղեր
Նպատակը
<ol style="list-style-type: none"> 1. Ամրապնդել վազքի, ցատկերի, նետումների, գնդակը փոխանցելու, ընդունելու և վարելու ունակությունները: 2. Ձևավորել շարժումները համաձայնեցնելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, համագործակցելու և ուշադրությունը կենտրոնացնելու կարողությունները: 3. Նպաստել համարձակության, ինքնավստահության, նպատակասլացության, փոխօգնության ունակությունների դաստիարակմանը:

<p>4. Չարգացնել ճարպկության, արագաուժային, ճկունության, դիմացկունության, կոորդինացիոն կարողությունները:</p> <p>5. Հաղորդել գիտելիքներ ֆուտբոլ խաղի կազմակերպման և անցկացման կանոնների մասին:</p> <p>6. Կարողանալ խաղալ զվարճալի ֆուտբոլ՝ շարժախաղերի տարրերով:</p> <p>7. Կարողանալ կազմակերպել և խաղալ շարժախաղեր:</p>	
Վերջնարդյունքները	
<p>1. Կարողանա ճիշտ կանոններով խաղալ որոշ շարժախաղեր՝ համաձայնեցնելով շարժումները և կողմնորոշվել տարածության մեջ:</p> <p>2. Կարողանա կողմնորոշվել տարբեր իրավիճակներում:</p> <p>3. Ցուցաբերի նախաձեռնություն, համարձակություն, փոխօգնություն, արագաշարժություն:</p>	
Բովանդակություն	
<p>Վազքի ունակության ամրապնդման խաղեր՝ «Օղակներով Էստաֆետ», «Շունը և տերը», «Հետապնդում սահմանագծված հատվածում», «Որսա և Նստիր»:</p> <p>Ցատկերի ունակության ամրապնդման խաղեր՝ «Թզուկներն ու հսկաները», «Ցատկելով առաջ»:</p> <p>Նետումների ունակության ամրապնդման խաղեր՝ «Նետում զամբյուղի մեջ», «Գնդակի նետում պատին»:</p> <p>Գնդակը փոխանցելու և վարելու ունակության ամրապնդման խաղեր՝ «Փոխանցավազք՝ գնդակներով, վարումով, արգելքների հաղթահալումով, շրջանցումներով, դարպասին հարվածելով», «Գնդակի փոխանցում տողանում», «Չույգերը գնդակով», «Գնդակի փոխանցում», «Գնդակներով Էստաֆետ»:</p> <p>Կոորդինացիոն ընդունակությունների ձևավորմանը նպաստող խաղեր՝ «Շաբաթվա օրերը», «Գիշեր-ցերեկ», «Թռչունները և վանդակը», «Արգելված շարժում», «Երրորդն ավելորդ է»:</p> <p>Ազգային տարրերով խաղեր՝ «Դաշտի չոբան», «Չանգակի խաղ», «Ծուղրուղու», «Աղվեսուկ», «Գալլ, թող գիշերենք քեզ մոտ», «Գայլն ու ոչխարը», «Ափ ու բռունցք», «Ծիտը քարին»:</p> <p>Չվարճալի ֆուտբոլի տարրերով խաղեր՝ «Չվարճալի ֆուտբոլ», տեղեկություն ֆուտբոլ խաղի կազմակերպման և անցկացման կանոնների մասին: «Երկկողմ խաղեր 2*2, 3*3, 4*4»:</p>	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
Առանց գործիքների և դրանց կիրառմամբ շարժախաղերի բովանդակությանը համապատասխան վարժությունների կատարում:	<p>1. Չարգացում</p> <p>Շարժախաղերի միջոցով սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և</p>

	<p>պարտականությունները, անհատ-համայնք- հասարակություն հարաբերությունները, հավասար հնարավորությունները, մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները:</p> <p>2. Համակարգ և մոդել</p> <p>Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Շարժախաղերի համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, մարզաձևերին նմանակող խաղերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <p>3. Անհատներ և հարաբերություններ</p> <p>Սովորողներն ուսումնասիրում են մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու</p>
--	---

	նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու - բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում: Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ: Կենսաբանություն - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն: Ֆիզիկա - պատկերացումներ կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին:	
Կապը հանրակրթության չափորոշչի վերջնարդյունքների հետ	
S1, S2, S3, S15, S22, S23, S24, S25, S26, S27, S28, S29, S30, S33, S35, S36, S37, S38	

Թեմա 5
Ընտրովի ուսումնական նյութ – 5 ժամ. լողի ուսուցում, դահուկային պատրաստություն
Նպատակը
<ol style="list-style-type: none"> 1. Տեղեկություն տալ դահուկային պատրաստության հիգիենիկ պահանջների և վարքի կանոնների մասին: 2. Ուսուցանել դահուկաշարքի կանոնները: 3. Ձևավորել սահաքայքի և բարձր ու ցածր կեցվածքով վայրէջքի կարողություններ: 4. Ուսուցանել «եղևնաձև» և «կիսաեղևնաձև» վերելքի տեխնիկան: 5. Ուսուցանել ցամաքում լողի նմանողական վարժությունների կատարման տեխնիկան: 6. Ուսուցանել ջրում շնչելու և արտաշնչելու տեխնիկան: 7. Ուսուցանել կրող կրծքի և մեջքի վրա ձեռքերի և ոտքերի աշխատանքի տեխնիկան: 8. Ուսուցանել ջրում ուղղահայաց դիրքով մնալու հատուկ շարժումների տեխնիկան: 9. Ձևավորել կրող լողաձևով ոտքերի և ձեռքերի աշխատանքը շնչառության հետ զուգակցելու կարողություններ: 10. Ուսուցանել ջրային խաղային գործողություններ: 11. Շարժախաղերի ժամանակ ուսուցանել և կիրառել տեխնիկական տարրերի զուգակցումներ: 12. Մշակել արագաշարժություն, դիմացկունություն, հավասարակշռություն,

կորորդինացիա: 13. Դաստիարակել կամային որակներ, փոխհամաձայնություն, կարգապահություն:	
Վերջնարդյունքները	
1. Իմանա դահուկային պատրաստության հիգիենիկ պահանջների և վարքի կանոնների մասին: 2. Կարողանա կատարել դահուկների և դահուկափայտերի ընտրություն: 3. Կարողանա կատարել փոփոխական երկքայլ ընթացք: 4. Կարողանա արգելակել «գութանաձև» և «հենումով»: 5. Կարողանա կատարել վերելք «սանդղաձև» ու «եղևնաձև» և կրկնվող դահուկաընթացքով հաղթահարել 100 մ: 6. Տիրապետի կրող կրծքի վրա լողաոճին՝ զուգակցելով ձեռքերի, ոտքերի աշխատանքը շնչառության հետ: 7. Կարողանա զուգակցել կրող մեջքի վրա լողաոճով ձեռքերի, ոտքերի աշխատանքը և շնչառությունը: 8. Կարողանա կատարել բրաս լողաոճով ձեռքերի և ոտքերի աշխատանքը: 9. Կարողանա կրող կրծքի և մեջքի վրա լողաոճերով հաղթահարել 25 մ տարածություն:	
Բովանդակություն	
1. Դահուկային պատրաստության տեխնիկայի մեթոդները և միջոցները՝ ծանոթություն դահուկային պատրաստության դասերի հիգիենիկ պահանջներին և վարքի կանոններին: Տեղաշարժվել դահուկներն ուսերի վրա: Դարձում տեղում՝ հենվելով դահուկների առաջնամասին: Սահաքայլք դահուկափայտերի օգնությամբ: Վերելք ոչ մեծ թեքության լանջի վրա «եղևնաձև» և «կիսաեղևնաձև» եղանակով: Վայրէջք բարձր ու ցածր կեցվածքով փոքր թեքության լանջով: Տեղաշարժ դահուկներով 1000 մ: 2. Լողի ուսուցման տեխնիկայի մեթոդները և միջոցները՝ ցամաքում՝ կրող կրծքի վրա և մեջքի վրա լողաոճերի նմանողական վարժություններ: Մեկնարկների և դարձումների նմանողական վարժություններ: Շնչել և արտաշնչել ջրում 10 անգամ անընդմեջ: Կրող կրծքի վրա լողատախտակի օգնությամբ՝ միայն ոտքերով և արտաշնչելով ջրի մեջ: Կրող կրծքի և մեջքի վրա լողաձևերով ձեռքերի աշխատանքը և շնչառությունը: Կրող կրծքի և մեջքի վրա լողաոճերով ոտքերի, ձեռքերի աշխատանքը և շնչառության համագործակցությունը: Ջրում ուղղահայաց դիրքով մնալու հատուկ շարժումներ: 25 մ լողատարածության կրկնակի լողանցումներ կրող կրծքի և մեջքի վրա լողաոճերով: Խաղեր ջրում. «Ծովն ավելոծվում է», «Գնացք և թունել», «Բռնիր ջուրը», «Ալիքները ծովում»:	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
Առանց գույքի և դրանց կիրառմամբ դահուկային պատրաստության և լողի	1. Օրինաչափություն Դրանք հանդիպում են

<p>վարժությունների կատարում:</p>	<p>ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում, օրինակ՝ սահող քայլերում, դահուկավազքում կամ լողում թիավարումի և դարձումների ժամանակ, շարժումների հերթագայության մեջ: Համապատասխան մոդելները առաջին քայլն են՝ պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք:</p> <p>2. Համակարգ և մոդել</p> <p>Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Դահուկային սպորտ» և «Լող» մարզաձևերը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, խաղերից և մարզաձևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <p>3. Անհատներ և հարաբերություններ</p> <p>Սովորողներն ուսումնասիրում են</p>
----------------------------------	---

	<p>մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
Միջառարկայական կապեր	
<p>Հայոց լեզու- բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:</p> <p>Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ:</p> <p>Կենսաբանություն - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա ` մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:</p> <p>Ֆիզիկա - պատկերացում կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին:</p>	
Կապը հանրակրթության չափորոշչի վերջնարդյունքների հետ	
S1, S2, S3, S15, S22, S23, S24, S25, S26, S27, S28, S29, S30, S33, S35, S36, S37, S38	

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Թեմա 1	
Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին գիտելիքներ – 5 ժամ	
Նպատակը	
<ol style="list-style-type: none"> 1. Հաղորդել գիտելիքներ դպրոցի ուսումնական գործընթացում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի նշանակության վերաբերյալ: 2. Ծանոթացնել հին հունական օլիմպիական խաղերի պատմությանը և հայերի մասնակցությանը այդ խաղերում: 3. Հաղորդել գիտելիքներ մարզասրահում, մարզահրապարակում և լողավազանում անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ: 	
Վերջնարդյունքները	
<ol style="list-style-type: none"> 4. Գիտի ֆիզիկական կուլտուրայի նշանակությունն անձի ներդաշնակ զարգացման գործում: 5. Պատկերացում ունի ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների ժամանակ անվտանգության կանոնների մասին: 6. Գիտի հին հունական օլիմպիական խաղերի պատմությունը և հայերի մասնակցության մասին այդ խաղերում: 	
Բովանդակություն	
<ol style="list-style-type: none"> 1. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի նշանակությունը դպրոցի ուսումնական գործընթացում: 2. Հին հունական օլիմպիական խաղերը և հայերի մասնակցությունը: 3. Անվտանգության կանոնների պահպանումը մարզասրահում, մարզահրապարակում, լողավազանում: 	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<ol style="list-style-type: none"> 1. Օգտվելով համացանցից և գրականությունից՝ ինքնուրույն ուսումնասիրում և ներկայացնում են «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի նշանակությունը դպրոցի ուսումնական գործընթացում, հին հունական օլիմպիական խաղերը և հայերի մասնակցությունը: 	<ol style="list-style-type: none"> 1. Ժամանակ և տարածություն Սովորողներն ուսումնասիրում են մարզական ոլորտի տարբեր մարդկանց պատմությունները, ինչպես նաև ֆիզիկական վարժություններով մարզումների դերը տարբեր ժամանակների նշանավոր մարդկանց կյանքում:

<p>2. Դասարանում կազմում են մարզասրահում, մարզահրապարակում և լողավազանում անվտանգության կանոնների պահպանման իրենց տարբերակը:</p>	<p>2. Անհատական և մշակութային արժեհամակարգ</p> <p>Սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:</p> <p>3. Չարգացում</p> <p>Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):</p>
<p>Միջառարկայական կապեր</p>	
<p>Հայոց լեզու - բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:</p> <p>Ռուսերեն և այլ օտար լեզուներ - կարդալ, գրել, հասկանալ և թարգմանել հայերեն:</p> <p>ՏՀՏ- համակարգչից և համացանցից օգտվելու, նյութի համակարգչային ներկայացման ձևերի իմացություն:</p> <p>Պատմություն - պատմական տվյալների իմացություն:</p>	
<p>Կապը հանրակրթության չափորոշչի վերջնարդյունքների հետ</p>	
<p>Հ1, Հ2, Հ3, Հ13, Հ14, Հ15, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ38, Հ41, Հ42, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50, Հ51, Հ52, Հ53</p>	

Թեմա 2	
Աթլետիկական վարժություններ – 14 ժամ. վազք, ցատկեր, նետումներ	
Նպատակը	
<ol style="list-style-type: none"> 1. Տեղեկություն հաղորդել «Աթլետիկա» մարզաձևի պատմության վերաբերյալ: 2. Ուսուցանել կարճ և միջին վազքեր: 3. Ուսուցանել «ոտքերը կծկված» եղանակով հեռացատկի և «քայլանցում» եղանակով բարձրացատկի տեխնիկան: 4. Ձևավորել թենիսի և լցրած գնդակներ նետելու հմտություն: 5. Չարգացնել արագաշարժության, ճկունության, ճարպկության, դիմացկունության, ցատկունակության, դիպուկության ընդունակությունները: 6. Դաստիարակել բարոյականային հատկանիշներ, համարձակություն, վճռականություն, նախաձեռնողականություն: 	
Վերջնարդյունքները	
<ol style="list-style-type: none"> 1. Տեղեկություններ ունենա «Աթլետիկա» մարզաձևի պատմության վերաբերյալ: 2. Կարողանա վազել կարճ և միջին տարածություններ: 3. Կարողանա «ոտքերը կծկված» եղանակով հեռացատկել և «քայլանցում» եղանակով բարձրացատկել: 4. Կարողանա նետել թենիսի և լցրած գնդակներ: 5. Ունենա արագաշարժության, ճկունության, ճարպկության, դիմացկունության, ցատկունակության, դիպուկության բավարար ունակություններ: 6. Լինի համարձակ, վճռական և նախաձեռնող: 	
Բովանդակություն	
<p>Ծանոթություն մարզաձևի պատմությանը և պարապմունքի ընթացքում վարքի կանոններին:</p> <p>Վազքեր: Վազք արագացումով 40 մ, վազք բարձր մեկնարկից և ընթացքից 20-40 մ, մաքրքավազք 4x10 մ: Վազք 30 մ գրանցելով արդյունքը: Հավասարաչափ վազք 8-10 րոպե:</p> <p>Ցատկեր: Տեղից հեռացատկ: Հեռացատկ 5-7 վազքաքայլով, հիման շեշտադրումով: Բարձրացատկ «քայլանցումով»՝ 3-5 վազքաքայլով 40-60 սմ բարձրության ձողի հաղթահարումով:</p> <p>Նետումներ: 6-8 մ հեռավորությունից թենիսի գնդակի նետում ուղղահայաց և հորիզոնական նպատակակետին (տեղից և 2-4 քայլ թափից):</p>	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
Առանց գործիքների և դրանց կիրառմամբ աթլետիկական վարժությունների կատարում:	<ol style="list-style-type: none"> 1. Օրինաչափություն Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում, օրինակ՝ քայլքի,

	<p>վազքի կառուցվածքում, շարժումների հերթագայության մեջ: Համապատասխան մոդելներն առաջին քայլն են՝ պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք:</p> <p>2. Համակարգ և մոդել</p> <p>Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Աթլետիկա» մարզաձևը), շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից և խաղերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <p>3. Անհատներ և հարաբերություններ</p> <p>Սովորողներն ուսումնասիրում են մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
Միջառարկայական կապեր	
<p>Հայոց լեզու - բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:</p> <p>Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ:</p>	

<p>Ֆիզիկա - պատկերացում կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին:</p> <p>Կենսաբանություն - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:</p> <p>ՏՀՏ- համակարգչից և համացանցից օգտվելու, նյութի համակարգչային ներկայացման ձևերի իմացություն:</p> <p>ՆԶՊ – արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու հմտություններ:</p>
Կապը հանրակրթության չափորոշի վերջնարդյունքների հետ
Յ1, Յ2, Յ3, Յ13, Յ14, Յ15, Յ26, Յ27, Յ28, Յ29, Յ30, Յ31, Յ32, Յ33, Յ34, Յ35, Յ36, Յ37, Յ38, Յ41, Յ42, Յ46, Յ47, Յ48, Յ49, Յ50, Յ51, Յ52, Յ53

Թեմա 3
Մարմնամարզական վարժություններ - 12 ժամ. շարային վարժություններ, ընդհանուր զարգացնող վարժություններ, կախեր և հենումներ , հենացատկեր, ակրոբատիկական վարժություններ, մագլցման վարժություններ, ռիթմիկ մարմնամարզության վարժություններ
Նպատակը
<ol style="list-style-type: none"> 1. Սովորեցնել շարափոխումների, ընդհանուր զարգացնող և մագլցման վարժությունների, կախերի և հենումների, հենացատկերի, ռիթմիկ մարմնամարզական վարժությունների տեխնիկապես ճիշտ կատարումը: 2. Չարգացնել ճկունության, կոորդինացիայի, ցատկունակության, ուժի, շարժումների ճշգրտության, արտահայտչականության, ռիթմայնության շարժողական ունակություններ: 3. Դաստիարակել կարգապահություն, կազմակերպվածություն, համարձակություն, վճռականություն, ինքնավստահություն, կամքի ուժ, տոկունություն: 4. Նպաստել գեղագիտական ճաշակի զարգացմանը:
Վերջնարդյունքները
<ol style="list-style-type: none"> 1. Կարողանա ինքնուրույն կատարել ընդհանուր զարգացնող, ռիթմիկ մարմնամարզության, ուժային, ճկունության, ճարպկության, ցատկունակության վարժությունները: 2. Ունենա շարժումները տարբերակելու, փոխկապակցելու, սահուն կատարելու, կոորդինացիայի հմտություններ: 3. Դրսևորի ինքնավստահության, նպատակասլացության, ինքնագնահատման և դժվարությունները հաղթահարելու հմտություններ:
Բովանդակություն
Շարային վարժություններ: Շարափոխում միասյուն շարքից քառասյուն շարքի մասնատումով և միաբերումով:

Ընդհանուր զարգացնող վարժություններ: Վարժություններ առանց առարկաների, մեծ և լցված գնդակով, կցագնդերով, մարզափայտերով (տղաներ): Վարժություններ օղերով, գուրգերով, մեծ գնդակներով, մարզափայտերով (աղջիկներ): Կեցվածքի ձևավորման վարժություններ:

Կախեր և հենումներ: Տղաներ. կախ ծալված և արտակորված: Ձգումներ կախ դրությունից: Կախ դրությունում ծնկային հոդում ուղղված ոտքերի բարձրացում: Աղջիկներ. խառը կախեր: Ձգումներ կախ պառկած դրությունից:

Մագլցման վարժություններ: Պարանամագլցում մինչև 2,5 մ (աղջիկներ) և 3 մ (տղաներ) ձեռքերի և ոտքերի օգնությամբ:

Հենացատկեր: 60-100 սմ բարձրությամբ լայնակի տեղադրված այծի վրա վերցատկում ընդունելով հենում կքանիստ դրությունը և վարցատկ արտակորված:

Ակրոբատիկական վարժություններ: Առաջգլուխկոնծի և հետիլուխկոնծի: Թիկնականգ:

Ռիթմիկ մարմնամարզության վարժություններ: Քայլքի և կքանիստի հաջորդում, ծնկերի ծալում, քայլք թաթերի վրա, լայն և փոքր քայլք, քայլք կրունկների վրա: Գլխի թեքումներ, իրանի դարձումներ, պտույտներ: Թեքումներ, իրանի դարձումներ համաձայնեցված ձեռքերի շարժումների հետ: Կիսակքանստելով ոտքերը տանել առաջ և կողմ: Մարմնի ծանրության տեղափոխում մի ոտքից մյուսին, մի կողմից մյուսի կողմը: Յուրացված շարժումներով ռիթմիկ մարմնամարզության համալիրների կատարում:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<p>Առանց գործիքների և դրանց կիրառմամբ մարմնամարզական վարժությունների կատարում:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Օրինաչափություն Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում, օրինակ՝ շարային կամ ակրոբատիկ վարժությունների կառուցվածքում, շարժումների հերթագայության մեջ: Համապատասխան մոդելներն առաջին քայլն են՝ պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք: 2. Համակարգ և մոդել Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Մարմնամարզություն» սպորտաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն

	<p>Է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից և խաղերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <p>3. Անհատներ և հարաբերություններ</p> <p>Սովորողներն ուսումնասիրում են մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
Միջառարկայական կապեր	
<p>Հայոց լեզու - բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:</p> <p>Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ:</p> <p>Ֆիզիկա - պատկերացում կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին:</p> <p>Կենսաբանություն - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:</p> <p>ՏՀՏ- համակարգչից և համացանցից օգտվելու, նյութի համակարգչային ներկայացման ձևերի իմացություն:</p> <p>ՆԶՊ – արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու հմտություններ:</p>	
Կապը հանրակրթության չափորոշիչի վերջնադրյունքների հետ	
Հ1, Հ2, Հ3, Հ13, Հ14, Հ15, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ38, Հ41, Հ42, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50, Հ51, Հ52, Հ53	

Թեմա 4
Բասկետբոլ – 8 ժամ. մարզախաղի պատմություն և կանոններ, բասկետբոլիստի կեցվածք և տեղաշարժեր, գնդակի ընդունում և փոխանցում, գնդակի վարում և նետումներ

Նպատակը	
<ol style="list-style-type: none"> 1. Ծանոթացնել պարապմունքների վարքի կանոններին և հիգիենիկ պահանջներին: 2. Ուսուցանել բասկետբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, գնդակի ընդունման, փոխանցման, վարման և նետման տեխնիկան: 3. Չարգացնել շարժողական ընդունակություններ (կոորդինացիա, ճարպկություն, արագաշարժություն, դիմացկունություն, ցատկունակություն): 4. Դաստիարակել կարգապահություն, աշխատասիրություն, համագործակցություն, փոխօգնություն: 	
Վերջնարդյունքները	
<ol style="list-style-type: none"> 1. Իմանա բասկետբոլ խաղի կանոնները: 2. Կարողանա տեխնիկապես ճիշտ կատարել գնդակի վարում, փոխանցումներ, նետումներ, պաշտպանողական և հարձակվողական գործողություններ: 3. Կարողանա խաղի ընթացքում կատարել համատեղ առաջադրանքներ, համագործակցել, հանդես բերել նախաձեռնություն, հանդուրժողականություն և ինքնատիրապետում: 4. Կարողանա դրսևորել արագաշարժության, դիմացկունության, դիպուկության, ճարպկության, ուժային, ցատկունակության հմտություններ: 	
Բովանդակություն	
<ol style="list-style-type: none"> 1. Ծանոթություն մարզաձևի պատմությանը և պարապմունքի ընթացքում վարքի կանոններին: 2. Բասկետբոլիստի կեցվածքը և տեղաշարժերը: Տեղաշարժեր բասկետբոլիստի կեցվածքով, կից քայլերով, կողքով, դեմքով առաջ և մեջքով առաջ: 3. Գնդակի ընդունում և փոխանցում, գնդակի ընդունում և փոխանցում երկու ձեռքով կրծքից, մեկ ձեռքով ուսի վրայից: Գնդակի ընդունում և փոխանցում շարժման ընթացքում: 4. Գնդակի վարում: Գնդակի վարում աջ և ձախ ձեռքով, ցածր և բարձր կեցվածքով: Գնդակի վարում տեղում և շարժման ընթացքում: 5. Գնդակի նետում: Գնդակի նետում օդակի մեջ մեկ և երկու ձեռքով տեղից և շարժման ընթացքում: Յուրացված շարժումների համակցում: 	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
Առանց գործիքների և դրանց կիրառմամբ բասկետբոլ մարզախաղի վարժությունների կատարում:	<ol style="list-style-type: none"> 1. Անհատական և մշակութային արժեհամակարգ Մարզախաղերի միջոցով սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ:

	<p>Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:</p> <p>2. Չարգացում</p> <p>Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):</p> <p>3. Համակարգ և մոդել</p> <p>Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Բասկետբոլ» մարզաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, խաղերից, մարզաձևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <p>4. Անհատներ և հարաբերություններ</p> <p>Սովորողներն ուսումնասիրում են մարզախաղերում դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային</p>
--	--

	ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:
Միջառարկայական կապեր	
<p>Հայոց լեզու- բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:</p> <p>Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ:</p> <p>Կենսաբանություն - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:</p> <p>Ֆիզիկա - պատկերացում կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին:</p> <p>Ռուսերեն և այլ օտար լեզուներ – կարդալ, գրել, հասկանալ և թարգմանել հայերեն:</p>	
Կապը հանրակրթության չափորոշի վերջնարդյունքների հետ	
Հ1, Հ2, Հ3, Հ13, Հ14, Հ15, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ38, Հ41, Հ42, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50, Հ51, Հ52, Հ53	

Թեմա 5
<p>Վոլեյբոլ – 8 ժամ. մարզախաղի պատմություն և կանոններ, վոլեյբոլիստի կեցվածք և տեղաշարժեր, գնդակի փոխանցում և ընդունում, սկզբնահարված, ուղիղ հարձակողական հարված և հարձակողական տակտիկա</p>
Նպատակը
<ol style="list-style-type: none"> 1. Ծանոթացնել պարապմունքների ընթացքում վարքի կանոններին, հիգիենիկ պահանջներին: 2. Ուսուցանել վոլեյբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, գնդակի ընդունման, փոխանցման, սկզբնահարվածի և ուղիղ հարձակողական հարվածի տեխնիկան: 3. Ծանոթացնել դիրքային հարձակման տակտիկական գործողություններին:. 4. Չարգացնել շարժողական (արագաշարժություն, ցատկունակություն, ռեակցիա, դիպուկություն, կոորդինացիա) ունակություններ: 5. Դաստիարակել կարգապահություն, ուշադրության կենտրոնացում, համագործակցություն, փոխօգնություն:
Վերջնարդյունքները
<ol style="list-style-type: none"> 1. Իմանա վոլեյբոլ խաղի կանոնները: 2. Կարողանա կատարել գնդակի փոխանցումներ, սկզբնահարվածներ, հարձակողական հարված, շրջափակում, տակտիկական գործողություններ: 3. Կարողանա հիմնական կանոններով վոլեյբոլ խաղալ: 4. Դրսևորի համագործակցության, նախաձեռնության, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողություններ: 5. Դրսևորի արագաշարժության, դիմացկունության, դիպուկության, ճարպկության, ուժային, ցատկունակության հմտություններ:
Բովանդակություն
<ol style="list-style-type: none"> 1. Ծանոթություն մարզաձևի պատմությանը և պարապմունքի ընթացքում վարքի կանոններին: 2. Վոլեյբոլիստի կեցվածքը և տեղաշարժերը: Վոլեյբոլիստի կեցվածքով տեղաշարժվելը կից քայլերով կողքով, դեմքով և մեջքով առաջ: Քայլք և վազք կանգառներով ու ազդանշաններով: 3. Գնդակի փոխանցում և ընդունում: Գնդակի փոխանցում երկու ձեռքով վերևից տեղում և առաջ շարժվելուց հետո: Գնդակի փոխանցում գլխավերևում: Գնդակի ընդունում երկու ձեռքով ներքևից, 2-3 մ հեռավորությունից: 4. Սկզբնահարված և ուղիղ հարձակողական հարված: Ներքևից ուղիղ սկզբնահարված ցանցից 3-6 մ հեռավորության վրա: Ուղիղ հարձակողական հարված խաղընկերոջ վեր նետած գնդակին: 5. Հարձակողական տակտիկա: Ծանոթություն վոլեյբոլի տակտիկական գործողություններին: Դիրքային հարձակում՝ առանց փոխելու խաղացողների դիրքը (5*1):

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<p>Առանց գործիքների և դրանց կիրառմամբ վիճելի մարզախաղի վարժությունների կատարում:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Անհատական և մշակութային արժեհամակարգ <p>Մարզախաղերի միջոցով սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:</p> 2. Չարգացում <p>Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):</p> 3. Համակարգ և մոդել <p>Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Վոլեյբոլ» մարզաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, խաղերից, մարզաձևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> 4. Անհատներ և հարաբերություններ

	<p>Սովորողներն ուսումնասիրում են մարգախաղերում դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
--	---

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու- բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:

Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ:

Ֆիզիկա - պատկերացում կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին:

Կենսաբանություն- մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:

Ռուսերեն և այլ օտար լեզուներ – կարդալ, գրել, հասկանալ և թարգմանել հայերեն:

Կապը հանրակրթության չափորոշչի վերջնարդյունքների հետ

Հ1, Հ2, Հ3, Հ13, Հ14, Հ15, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ38, Հ41, Հ42, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50, Հ51, Հ52, Հ53

Թեմա 6

Հանդբոլ – 8 ժամ. մարգախաղի պատմություն և կանոններ, հանդբոլիստի կեցվածք և տեղաշարժեր, գնդակի ընդունում և փոխանցում, գնդակի վարում և նետում դարպասին, ազատ հարձակողական տակտիկա և խաղի տիրապետում

Նպատակը

1. Ծանոթացնել պարապմունքի ընթացքում վարքի կանոններին և հիգիենիկ պահանջներին:
2. Ուսուցանել հանդբոլիստի կեցվածքով տեղաշարժերի, գնդակի ընդունման, փոխանցման, վարման, հենումով և ցատկով դարպասին գնդակը նետելու տեխնիկան:
3. Ծանոթացնել տակտիկական (2x1, 3x2, 3x3) գործողություններին:
4. Չարգացնել շարժողական (արագաշարժություն, կոորդինացիա, ճարակություն, դիմացկունություն) ունակություններ:
5. Դաստիարակել համագործակցություն, կարգապահություն, փոխօգնություն:

Վերջնարդյունքները	
<ol style="list-style-type: none"> 1. Իմանա հանդիմանում խաղի կանոնները: 2. Կարողանա կատարել հանդիմանում խաղի տեխնիկական և տակտիկական գործողությունները: 3. Կարողանա հիմնական կանոններով հանդիմանում խաղալ: 4. Ցուցաբերի համագործակցության, հանդուրժողականության, փոխօգնության, ինքնատիրապետման, նպատակասլացության կարողությունները: 5. Դրսևորի դժվարությունները հաղթահարելու կամք, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու հմտություններ: 6. Դրսևորի արագաշարժության, դիմացկունության, դիպուկության, ճարպկության, ուժային, ցատկունակության հմտություններ: 	
Բովանդակություն	
<ol style="list-style-type: none"> 1. Ծանոթություն մարզաձևի պատմությանը և պարամունքի ընթացքում վարքի կանոններին: 2. Հանդիմանում կեցվածքը և տեղաշարժերը: Տեղաշարժեր հանդիմանում կեցվածքով՝ կից քայլերով, մեջքով առաջ և կողմ, դեմքով առաջ և կողմ: Կանգառներ երկու քայլով և ցատկով, դարձումներ առանց գնդակի և գնդակով: 3. Գնդակի ընդունում և փոխանցում: Գնդակի ընդունում և փոխանցում երկու ձեռքով տեղում և շարժման ընթացքում: 4. Գնդակի վարում: Գնդակի վարում ցածր կեցվածքով, տեղում և շարժման ընթացքում: Գնդակի վարում աջ և ձախ ձեռքով: 5. Գնդակի նետում դարպասին: Գնդակի նետում դարպասին հենումով և ցատկով: 6. Ազատ հարձակողական տակտիկա: Արագ հարձակում, երկու խաղացողների փոխգործողություններ: 7. Խաղի տիրապետում: Խաղային առաջադրանքներ 2*1, 3*2, 3*3 դիմաց: 	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
Առանց գործիքների և դրանց կիրառմամբ հանդիմանում մարզախաղի վարժությունների կատարում:	<ol style="list-style-type: none"> 1. Անհատական և մշակութային արժեհամակարգ Մարզախաղերի միջոցով սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում: 2. Չարգացում

	<p>Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):</p> <p>3. Համակարգ և մոդել</p> <p>Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Հանդբոլ» մարզաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, խաղերից, մարզաձևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <p>4. Անհատներ և հարաբերություններ</p> <p>Սովորողներն ուսումնասիրում են մարզախաղերում դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
--	---

Միջառարկայական կապեր
<p>Հայոց լեզու - բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:</p> <p>Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ:</p> <p>Ֆիզիկա - պատկերացում կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին:</p> <p>Կենսաբանություն- մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:</p> <p>Ռուսերեն և այլ օտար լեզուներ – կարդալ, գրել, հասկանալ և թարգմանել հայերեն:</p>
Կապը հանրակրթության չափորոշչի վերջնարդյունքների հետ
<p>Հ1, Հ2, Հ3, Հ13, Հ14, Հ15, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ38, Հ41, Հ42, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50, Հ51, Հ52, Հ53</p>

Թեմա 7
<p>Ֆուտբոլ – 8 ժամ. մարզախաղի պատմություն և կանոններ, տեղաշարժերի տեխնիկա, գնդակի տիրապետման տեխնիկա, դարպասապահի գործողությունները և տեղաշարժվելը, խաղի տակտիկա, հարձակողական տակտիկա և խաղի տիրապետում</p>
Նպատակը
<ol style="list-style-type: none"> 1. Ծանոթացնել ֆուտբոլի պատմությանը, պարապմունքների ընթացքում վարքի կանոններին, հիգիենայի պահանջներին, տնային հանձնարարությունների կատարմանը և առաջադիմության գնահատմանը: 2. Ուսուցանել հարձակողական և պաշտպանողական տակտիկական գործողություններ: 3. Ուսուցանել ֆուտբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, անշարժ և գլորվող գնդակին հարվածների, կասեցումների, գնդակի վարման տեխնիկան, ծանոթացնել պարզեցված կանոններով ֆուտբոլ խաղի կանոններին, բովանդակությանը: 4. Երկկողմ խաղ՝ 2X1, 2X2, 3X3, 4X4, 5X5: 5. Չարգացնել շարժողական (արագաշարժություն, դիմացկունություն, ցատկունակություն, ճարպկություն) ունակություններ: 6. Դաստիարակել փոխօգնության, կարգապահության, համարձակության, համագործակցության կարողություններ:
Վերջնարդյունքները
<ol style="list-style-type: none"> 1. Իմանա ֆուտբոլ խաղի կանոնները, կատարի խաղի հիմնական տեխնիկական և տակտիկական գործողությունները: 2. Դրսևորի նախաձեռնություն, ինքնուրույնություն, ինքնատիրապետում, սեփական շարժողական գործողությունների գնահատման կարողություն: 3. Կարողանա համագործակցել, ցուցաբերի բարություն, ազնվություն, հանդուրժողականություն, հարգանք բոլորի նկատմամբ:

4. Դրսևորի արագաշարժության, դիմացկունության, դիպուկության, ճարպկության, ուժային, ցատկունակության հմտություններ:

Բովանդակություն

Ծանոթություն ֆուտբոլի պատմությանը և պարապմունքների ընթացքում վարքի, հիգիենայի և խաղի կանոններին:

Տեղաշարժերի տեխնիկա: Ֆուտբոլիստի կեցվածքով տեղաշարժվել կից քայլերով, կողադիր քայլերով, մեջքով առաջ, արագացումներ, պոկումներ, տարբեր դրությունից մեկնարկեր: Վազք մեջքով առաջ: Տեխնիկայի յուրացված տարրերով համակցումներ՝ վազքեր-կանգեր-դարձումներ-արագացումներ գնդակով և առանց գնդակի:

Գնդակի տիրապետման տեխնիկա: Հարվածներ գնդակին, հարվածներ անշարժ գնդակին ոտնաթաթի ներսի մասով, ոտնաթմբով: Հարվածներ գլուխով գնդակին ոտնաթաթի ներսի մասով, ճակատով:

Գնդակի կասեցում: Գնդակի կասեցում ներքանով, ոտնաթաթի ներսի և դրսի մասերով: Գնդակի վարում ոտնաթաթի ներսի և դրսի մասերով, ոտնաթմբով: Խաբբեր՝ հնարքներ խաղային վարժություններ կատարելու պայմանով:

Գնդակի խլում՝ շարժվել ընդառաջ մրցակցին, ժամանակին և կտրուկ հարվածել գնդակին՝ խլելով այն մրցակցից: Գնդակը ճշգրիտ փոխանցել խաղընկերոջը նշանակետից: Գնդակը խաղի մեջ խաղի մեջ մտցնել նետումով, ազատ հարվածով:

Անպարարություն գնդակով: Անպարարություն ոտնաթմբով, ազդրով, գլխով:

